

մի դաշտերու վրայ: Աղդախնութեան սկզբը — աղղերու ինքնորոշման սկզբունքն էր: Անոր անունով էր, որ Իտալիա, Հունգարիա եւ շարք մը այլ երկիրներ ապստամբեցան 60-ական թուականներուն եւ թօթափեցին օտարի լուծը: Անոր անունով էր, որ Նապոլէոն Գ. զրկեց Ֆրանսական բանակը Իտալիոյ ռազմադաշտերը, կուռելու համար ընդգէժ Աւրստրիոյ եւ յանուն Իտալիոյ ազատագրութեան:

Իշխան Գօրչակով որդեգրեց այդ մեծ ըսկզբունքը, որ պիտի դառնար անոր ձեռքին գերագանց գէնք մը իր սլավասէր քաղաքականութիւնը յառաջ մղելու համար: Յանուն աղդախնութեան սկզբունքի, յանուն աղղերու ինքնորոշման ու ազատագրման համաշխարհային հաւատամքի՝ նա որոշեց իր ձեռքն առնել եւ ղեկավարել բալկանեան սլավ աղղերու ճակատագիրը:

Եւ հանրային կարծիքը Ռուսաստանում, մտաւորական տարրերը, յայտնի չափով նոյնիսկ լայն զանգուռները խանդավառուեցան այդ դադափարով:

— Աղատե՛լ համարին ու կրօնակից ժողովուրդները օսմանեան լուծէն:

Համասլավօնութեան դադափարը, նպատակաւորաբար կառավարութենէն, կարճ միջոցում մեծ ծաւալ առաւ: Կաղմակերպուեցան ամենուրեք կոմիտէներ, որոնք դրամ կը հաւաքէին եւ կը քարոզէին օչնութեան հասնել Բալկաններու մէջ տանջուող եղբայրներուն: Սլավասէրներու ընկերութիւնը կենտրոն հաստատեց Մոսկուայի եւ Բուքրէշի մէջ: (Ռումանիա, Սերբիա արդէն ինքնավար գոյութիւն ունէին, բայց դեռ թիւրքական զերիշխանութեան տակ):

Սկիզբները այդ ընկերութեան գործունէութիւնը զուտ կուրտուրական, մշակութային էր: Հաւաքուած դրամներով դպրոցներ ու դըրադարաններ կը հիմնէին Բուլղարիոյ, Մօնտէնէգրօի, Բօսնիա-Հերցեգի մէջ: Շուտով այդ խաղաղ աշխատանքը պիտի վերածուէր յեղափոխական դաւերու եւ կամաւորական համատարած շարժման:

Ռուսիոյ հմայքը օր աւուր կ'աճէր բալկանեան ստրուկ ժողովուրդներու մէջ, ատոր հետ կ'աճէին եւ յեղափոխական խմորումնե-

րը: Կը պատրաստուէին օրհասական պայքարներու ընդգէժ օսմանեան բնագիտութեան եւ ամենուն յոյսը — «սպիտակ ցարն» էր:

Աւելորդ է նկարագրել հոս թիւրքահապտակ սլավ աղղերու վիճակը: Նոյնն էր, ինչ որ Յունաստանում նախ քան անկախութեան կռիւները (նկարագրուած նոյն այս էջերու մէջ. տե՛ս մեր յօդուածը «Միսոլունգի» խորագրով): «Գեափուրք» մարդ մը չէր — շուն էր: Եւ կը արորուէր ու կը տառապէր, որպէս շուն մը: 1875-ին, քաղաքակիրթ մարդկութեան ուզուած իրենց մանիֆեստի մէջ՝ Բօսնիա Հերցեգի ապստամբները հետեւեալը կը գրէին.

— «Ո՛վ որ չգիտէ, թէ ինչ է թիւրքական բարբարոսութիւնը, ո՛վ որ չի տեսել քրիստոնեայ ժողովրդի կրած տանջանքները, չի կարող անդամ մօտանոր զաղափար մը կազմել «ուայեա»ի էութեան մասին. անխօս, անմտունչ է՝ ակ մըն է ան, անասունէն ալ ստոր, մարդկային տեսակ մը, որ ծնուած է յաւիտենական ստրկութեան համար... Իւրաքանչիւր մէկ թիղաչափ հոյ ոտոզուած է մեր պապերուն արիւնսով ու արցունքներով»...

Ռուսական օչնութեան յոյսը միակ խթանը չէր բալկանեան ստրկացուած աղղերու ապրաստամբութեան համար: Մեծ դեր կը խաղար օրինակը... Անոնք կը տեսնէին Յունաստանն ազատ ու անկախ, Սերբիան, Ռումանիան՝ ինքնավար — եւ այդ երկիրներու օրինակը աւելի եւս կը սաստկացնէր ստրուկ մնացած ժողովուրդներու ատելութիւնը դէպի դահիճը եւ բարոյական տանջանքները: (Նոյն աղղակը յետագային իր խոշոր դերն ունեցաւ նաեւ հայ ազատագրական շարժումներու ծագման պատճառներու մէջ):

* * *

Գեափուրք պատրաստ էր ուստական Բիսմարկի «մեծ հարուածներու» համար: Ան չէր մտնար մշակելու եւ Կ. Պոլսոյ միջավայրը, ուր զրկիւր էր իբրեւ դեսպան կարող ու աղղեցիկ մարդ մը, նոյնպէս համոզուած համասլավօնական — զօրավար Իգնատիեօ: Ռուսական աղղեցութեամբ կը տոգորուէր ողջ օսմանեան կայսրութիւնը...

Միջազգային դիւանագիտական կացու-